19 16854

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԵՔ-ԴՄ- 04

Ք. Երևան 15.10. 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, «Արմֆիլմ Ինդուստրի Դեվելոպմենտ մշակութային հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի տնօրենի ժ/պ Հմայակ Ալեքսանյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115 Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 10-ի «Կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N 1692-Ա/2 հրամանը, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհների հատկացման մրցույթի հանձնաժողովի 24.09.2021թ. N 04/21 արձանագրությունը «Կարճամետրաժ ֆիլմերի 4-րդ միջազգային կինոփառատոն» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 2700.0 հազար (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարվելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.11. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով

կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1 կետում սահմանված գումարի 80%-ը կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5.2. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման և հաշվետվությունների ընդունման ժամկետը մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ն է:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները

կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	**ԿԱՏԱՐՈՂ՝**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Արմֆիլմ Ինդուստրի Դեվելոպմենտ մշակութային հիմնադրամ»
Երևան, Վ. Սարգսյան 3	ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 5
Կառավարական տուն N 2	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 2052212197310, ՀՎՀՀ 02693936
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732	Հեռ. (055) 189-475
Պատվիրատուի ստորագրությունը	afidfoundation@gmail.com
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Կատարողի ստորագրությունը
Վահրամ Գասպարյան	հիմնադրամնի տնօրենի ժ/պ՝ **Հմայակ Ալեքսանյան**
Կ. Տ.	**Կ. Տ.**

Հավելված 1
2021թ. հոկտեմբերի 15-ին
կնքված N ԵՔ-ԴՄ- 04 պայմանագրի

Կարճամետրաժ ֆիլմերի 4-րդ միջազգային կինոփառատոն դրամաշնորհային ծրագրի

Ծրագրի նկարագրություն Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Փառատոնը նպատակ ունի ոչ միայն մրցութային ֆիլմերի ցուցադրություններ իրականացնել այլ պրակտիկ աշխատանքների միջոցով նպաստել երիտասարդ կինոռեժիսորների մասնագիտական և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Նշյալ նպատակի իրագործման համար կիրականացվի հետևյալ աշխատանքները՝

- 4-րդ կինոփառատոնի կարևորագույն իրադարձություններից է լինելու առաջին անգամ Հայաստանում կազմակերպվելիք՝ «Short MARKET»:
- Արդեն իսկ նախնական համաձայնություն է ձեռք բերվել 4 ֆիլմարտադրող ընկերությունների պրոդյուսերների հետ՝ «Info Arménie» (Ֆրանսիա), «Irib Media Trade» (ԻԻՀ), «*Молодежные инициативы*» (ՌԴ), «IMAGE production» (ՀՀ) 4 կարճամետրաժ ֆիլմի ստեղծման առնչությամբ: Նկարահանված ֆիլմերը կլինեն նովելներ «Ճանապարհ.60կմ» լիամետրաժ խաղարկային ֆիլմում:

«Short MARKET»-ի ընթացքում երիտասարդ ստեղծագործողները կներկայացնեն կարճամետրաժ ֆիլմի նախագիծ «ճանապարհ» թեմայով, իսկ պրոդյուսերները ներկայացված նախագծերից կընտրեն 4 կինոնախագիծ, որոնցից յուրաքանչյուրի ֆինանսավորումը կստանձնեն վերոհիշյալ ֆիլմարտադրող ընկերություններից մեկը:

«Ճանապարհ.60կմ» լիամետրաժ խաղարկային ֆիլմի կոնցեպտը՝

- Յուրաքանչյուր ռեժիսոր ունի 15 րոպե տևողություն
- Անհրաժեշտ է ֆիլմի գործողությունները ընդգրկի ճանապարհ
- Ֆիլմի գործող անձինք լինեն մաքսիմում 5 անձ

Նախատեսվում է «Ճանապարհ.60կմ» լիամետրաժ ֆիլմի պրեմիերան իրականացնել 2022թ. 5-րդ հոբելյանական կինոփառատոնի շրջանակում:

Նմանատիպ ծրագիր իրականացվեց 2-րդ կինոփառատոնի ընթացքում ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ: Երեք երիտասարդ կինոռեժիսորների ֆինանսական աջակցություն հատկացվեց նկարահանելու իրենց դեբյուտային խաղարկային կարճամետրաժ ֆիլմերը՝ «Հայաստան-Ֆուտուրա» թեմայով: Ֆիլմերը արդեն մասնակցել են բազմաթիվ միջազգային կինոփառատոնների՝ արժանանալով մրցանակների: Հատկանշական է, որ մրցույթի հաղթող

մասնակիցներից Վլադիմիր Պոլուայանի «Ժամանակի անիվ» ֆիլմի նկարահանանումը իր ապագա մասնագիտությունը կողմնորոշելու հանգամանք հանդիսացավ և նա այժմ սովորում է Իռլանդիայի «Ստիրլինգի համալսարան»-ի «Ֆիլմ և Մեդիա» բաժնի անվճար համակարգում:

- Մյուս կարևոր իրադարձությունն է 4-րդ կինոփառատոնի ընթացքում վրացական «INNOVATOR» ընկերության հետ համատեղ իրականացվելիք հեղինակավոր կինո և լուսային սարքավորումներ արտադրող ընկերությունների շնորհանդեսը՝ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ,ինչպիսիք են՝ (ARRI, KINOFLO, DEDOLIGHT, DJI, PANASONIC, CANON, SONY)

Փառատոնի իրականացումը կնպաստի երիտասարդ կինոսերնդի ձևավորմանը Հայաստանում: Ինչպես վկայեց առաջին, երկրրոդ, երրորդ կինոփառատոնի իրականացումը երիտասարդ ստեղծագործողները մեծ ոգևորությամբ ընդունեցին փառատոնի ի հայտ գալը:

Կինոփառատոնը երիտասարդ ռեժիսորի համար ճանապարհ է դեպի կինոաշխարհ, իսկ շփումները օտարազգի գործընկերների հետ՝ ճաշակն ու մտահորիզոնը ընդլայնելու լավ հնարավորություն: Երիտասարդ ռեժիսորի համար փառատոնը բացահայտվելու և ինքնարտահայտվելու հնարավորություն է ընձեռում: Կինոփառատոնը կոչված է օժանդակելու երիտասարդ ստեղծագործողներին և ինտեգրացիոն գործընթացների ձևավորմանը կինոյի ասպարեզում:

Կինոփառատոնի գործընկերների հանձնած խրախուսական մրցանակները երիտասարդ կինոռեժիսորներին մեծ ոգևորություն պարգևեցին հետագայում նոր ֆիլմեր նկարահանելու և հետագայում նորից կինոփառատոնին մասնակցելու:

Կինոփառատոնը հարթակ է երիտասարդ կինոռեժիսորների համար իրենց ֆիլմերը ցուցադրելու հաշվի առնելով, որ ՀՀ-ում կարճամետրաժ ֆիլմերի դիստրիբուցիա չկա:

Կազմակերպության փորձառությունը

Հիմնադրամի նպատակներն են՝

- Կինեմատոգրաֆիայի ոլորտի ինդուստրիալ զարգացում,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտի մասնագետների տվյալների բազայի ստեղծում,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտում կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- Կինոփառատոների և այլ մշակութային միջոցառումների կազմակերպում,
- Կինոփառատոներին և կինոշուկաներին մասնակցության ապահովում,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտի կազմակերպությունների հետ կապերի ստեղծում,
- Համատեղ ֆիլմարտադրության խթանում,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտի նյութատեխնիկական հենքի արդիականացում,
- Կինեմատոգրաֆիա ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավում:
-

Այս նպատակներն իրագործելու համար Հիմնադրամը իրականացնում է՝

- Մշակույթի, կրթության և կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրեր,
- Կինոժառանգության պահպանմանն ու հանրահռչակմանն ուղղված ծրագրեր,
- Միջոցառումներ կազմակերպելուն և դրանցում մասնակցություն ապահովելուն ուղղված ծրագրեր,

- Ֆիլմարտադրությանը, ֆիլմի տարածմանը (դիստրիբուցիա) և ցուցադրմանը նպաստող ծրագրեր,
- Միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ համագործությանն ուղղված ծրագրեր,
- Օտարերկյա ներդրումներ ներգրավելուն ուղղված ծրագրեր:

Հիմնադրամի շահառուների խմբերն են՝

- Կինեմատոգրաֆիայի ոլորտում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք,
- Մշակութային և կրթական ծրագրեր իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտում գիտելիքներ ձեռք բերելու և (կամ) գիտելիքները զարգացնելու նպատակ հետապնդող ֆիզիկական անձինք,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացմանը նպաստող ծրագրեր իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

*Ծրագրի իրականացման համար 2018թ.2019թ.,դրամաշնորհատու է հանդիսացել ՀՀ մշակույթի նախարարությունը/կից ներկայացվում է 2019թ.պայմանագիրը,որը կնքվել է մեր գործընկեր «Երիտասարդության կամք» հասարակական կազմակերպության հետ,աջակցության չափը կազմել՝3.000.000 ՀՀ դրամ:/2020թ.փառատոնը անց է կացվել հիմնադրամի միջոցներով ստորև ներկայացված հղումով հնարավոր է ծանոթանալ՝

https://www.facebook.com/YerevanShortFilmFestival

https://filmfreeway.com/YerevanShortFilmFestival

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Փառատոնը նախատեսվում է դարձնել շարունակական և ավանդական: Այն հեռանկարային և երկարաժամկետ ազդեցություն կունենա կինոարվեստի զարգացման ընդհանուր դաշտում, իսկ երիտասարդ կինոգործիչների խրախուսման, նրանց գործունեության իրականացման համար ևս մեկ հարթակի ստեղծումը կնպաստի մրցակցային դաշտի ձևավորմանը, հայկական կինոյի միջազգային համբավի և տեղորոշման բարձրացմանը:

Գործողություններ

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս								
			4	5	6	7	8	9	10	11	12
1	Ֆիլմերի ընտրական փուլ	Ազգային և միջազգային մրցույթի համակարգողներ	+	+	+	+	+	+	+		
3	Կազմակերպչական աշխատանքներ	Համակարգողներ, իրականացնող կազմակերպություններ						+	+		

	`(Ժյուրիի ընտրություն, կայքի ձևավորում,փառատոնի միջոցառումների կազմավորում և այլն)										
4	Մրցութային ծրագրի և միջոցառումների հրապարակում/ մամլո ասուլիս/	Փառատոնի անձնակազմ							+	+	
5	Գովազդային և փառատոնի անցկացման վերաբերյալ իրազեկման աշխատանք								+	+	
6	Փառատոնի իրականացում								+	+	

Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը

Առաջնահերթ փառատոնի թիրախային խումբն են՝ երիտասարդ կինոռեժիսորները, օպերատորները, սցենարիստները, պրոդյուսերները: Փառատոնի ամբողջ ծրագիրը հասանելի է նաև հանդիսատեսի համար:

Առանձնացվում են հետևյալ շահագրգիռ խմբերը.
1) թիրախային խումբ՝ երիտասարդ կինոգործիչներ
2) ծրագրի ղեկավար և աշխատակազմ, որն իրականացնում է ծրագրի ընթացիկ ղեկավարումը և դրա իրականացման աշխատանքները և ծառայությունների մատուցումը.
3) շահագրգիռ այլ կողմեր՝ ծրագրի իրականացման անմիջական միջավայրով հետաքրքրվող մարդիկ կամ կազմակերպություններ (հովանավոր անձինք կամ կազմակերպություններ):

Փառատոնին ինչպես նախորդ տարի այս տարի նույնպես համագործակցության պատրաստակամությունն են հայտնել՝

- *«Հայաստանի կինեմատոգրաֆիստների միություն» ՀԿ*
- *UN Armenia - ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ*
- *«Երիտասարդության Կամք» ՀԿ*
- *«Հայաստանի ազգային Կինոկենտրոն» ՊՈԱԿ*
- *«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ*
- *«Դավ» տպագրատուն*
- *«Հայասա ֆիլմ» ֆիլմարտադրող ընկերություն*

- *«Ռեալբորդ» ընկերություն*
- *«Ապաթեոզ» ընկերություն*
- *«Դար» փարածաշրջանային զարգացման հիմադրամ*
- *«Ավտոգրոֆ» դիզայներական ընկերություն*
- *« Էկոտրանս» ընկերություն*

Ռիսկերի գնահատում

1. **Կազմակերպական ռիսկ:** Փառատոնի կազմակերպման գործընթացում ներգրավվում են տարբեր պետական, համայնքային, ոչ պետական կազմակերպություններ և Ծրագրի արդյունավետության վրա հավասարապես բացասական ազդեցություն կունենան թե՛ որևէ օղակի, որևէ հանգույցի «խափանումը», թե՛ այդ օղակների չհամակարգված գործունեությունը: Ըստ այդմ, չափազանց կարևոր է Փառատոնի բոլոր օղակների՝ **պետական, համայնքային և ոչ պետական կազմակերպությունների** իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության շրջանակի հստակեցումը: Ընդ որում, եթե պետական և համայնքային կազմակերպությունների պարագայում հստակեցումները կատարվելու են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում, ապա ոչ պետական կազմակերպությունների պարագայում այն իրականացվելու է պայմանագրային հիմունքներով: Հաշվի առնելով նշվածը՝ Փառատոնի նախապատրաստական փուլում կիրականացվեն հետևյալ միջոցառումները
   - ✓ կհստակեցվեն շահագրգիռ կազմակերպությունների գործառույթները Փառատոնի շրջանակներում,
   - ✓ կհստակեցվեն Փառատոնում ներգրվված անձանց իրավունքները և պարտականությունները ,
   - ✓ կգնահատվեն անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների ու փառատոնի անձնակազմի գործառույթների վերաբաշխման անհրաժեշտությունը:

2. **Covid-19**
   Այս ռիսկի հաղթահարման ռազմավարությունը, *որի արդյունքում ակնկալվում է ռիսկի ազդեցության նվազեցում, փառատոնի իրականացումը առցանց ձևաչափով:*

Ծրագրի աշխատակազմը

Փառատոնի կազմկոմիտեում և աշխատակազմում ընդգրկված են փորձառու կինոռեժիսորներ,պրոդյուսերներ,հեղինակավոր միջազգային կինոփառատոնների մասնակիցներ,փառատոնների կազմակերպման մասնագետներ,ինչը կնպաստի փառատոնի կազմակերպիչների նպատակների արդյունավետ իրագործմանը: Ծրագրի համակարգողները,աշխատակազմը,այլ աշխատանքներ իրականացնող կազմակերպությունները պայմանագրով սահմանված պարտականությունների համաձայն իրականացնելու են իրենց աշխատանքը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Կարճամետրաժ ֆիլմերի 4-րդ միջազգային կինոփառատոն						
	անվանումը	բովանդակությունը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	Կարճամետրաժ ֆիլմերի 4-րդ միջազգային կինոփառատոն	Փառատոնի կազմակերպում /նախնական փուլ/	Ազգային և միջազգային մրցութային ծրագրերի համակարգողների ներգրավում	Փառատոնի ազգային և միջազգային մասնակից ֆիլմերի ցանկի ձևավորում	Հոկտեբերի 1-14	Բովանդակային և ֆինանսական հաշվետվություն Դեկտեմբերի 15	0
2.		Փառատոնի հոլովակների պատրաստում՝ ազգային և միջազգային ծրագրերի համար, կարճամետրաժ ֆիլմի DSP ֆորմատի ստեղծում և պրոմո հոլովակի պատրաստում	Մասնակից ֆիլմերի տրամադրում հոլովակների և DSP ֆորմատի պատրաստման համար	Փառատոնի վերաբերյալ 5 րոպե տևողությամբ երկու հոլովակների, 17 վարկյան տևողության պրոմո հոլովակի պատրաստում, ինչպես նաև 50 կարճամետրաժ ֆիլմի DSP ֆորմատի տեղափոխում թվային կրիչի վրա	Հոկտեբերի 15-18	Բովանդակային և ֆինանսական հաշվետվություն Դեկտեմբերի 15	1639500
3.		PR և ընդհանուր գովազդային արշավ	Փառատոնի և նրա ընթացքի վերաբերյալ նյութերի տեղադրում և տարածում սոց. ցանցերում	Ծրագրի հանրայնացում, SMM ծառայությունների մատուցում (Facebook, Instagram)	Հոկտեբերի 15-ից Դեկտեմբերի 5-ը	Բովանդակային և ֆինանսական հաշվետվություն Դեկտեմբերի 15	480000
4.		Տպագրական աշխատանքների իրականացում	Փառատոնի մասնակիցների	Դիպլոմների և մասնակցության	Հոկտեբերի 15-17-ը	Բովանդակային և ֆինանսական հաշվետվություն	30500

5.		Փառատոնի իրականացում	Փառատոնի մասնակից ֆիլմերի ցուցադրում և մրցանակների հանձնում 11 անվանակարգում, Երիտասարդ կինոգործիչների ներուժի բացահայտում, նրանց կարողությունների զարգացման և խթանման համար անհարժեշտ պայմանների ապահովում,	Փառատոնի ընթացի վերաբերյալ ֆոտո և վիդեո նկարահանում	Հոկտեբերի 15-18-ը	Բովանդակային և ֆինանսկան հաշվետվություն Դեկտեմբերի 15	100000
6.		Հաշվետվությունների ներկայացում			Դեկտեմբերի 5-10-ը	Բովանդակային և ֆինանսկան հաշվետվություն Դեկտեմբերի 15	
	Ընդամենը՝ 2.250.000 **Ընդամենը ԱԱՀ՝ 450.000** **Ընդամենը՝ 2.700.000**						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472,ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Արմֆիլմ Ինդուստրի Դեվելոպմենտ մշակութային հիմնադրամ»
ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 5
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20528221593100, ՀՎՀՀ 02693936
Հեռ. (055) 189-475
afidfoundation@gmail.com
Կատարողի ստորագրությունը
հիմնադրամնի տնօրենի ժ/պ՝
Հմայակ Ալեքսանյան
Կ. Տ.

15.10.2021թ. Հավելված 2
ԵՔԴՄ- 04 ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու «Արմ Ֆիլմ Ինդուստրի Դևելոպմենտ» մշակութային հիմնադրամ
Ծրագրի անուն Կարճամետրաժ ֆիլմերի 4-րդ միջազգային կինոփառատոն

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Համաֆինանսավորվող գումարը (ՀՀ դրամ)	Ընդհանուր Պահանջվող և Համաֆինանսավորվող գումարները
	Աշխատավարձ						
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**						
1.1	Փառատոնի ղեկավար	մարդ	1	130000	130000		130000
1.2	Փառատոնի համակարգող/միջազգային ծրագիր/	մարդ	1	130000	130000		130000
Ընդամենը Ա						**260.000**	
Բ	**Ծրագրային ծախսեր**						
2.1	Փառատոնի հոլովակի պատրաստում/ազգային ծրագիր/	րոպե	5	56000	280000		280000
2.2	Փառատոնի հոլովակի պատրաստում/միջազգային ծրագիր/	րոպե	5	56000	280000		280000

2.3	Կարճամետրաժ ֆիլմի DSP ֆորմատի ստեղծում	հատ	50	20000	1000000		1000000
2.4	4 օր ֆոտո և վիդեո նկարահանում փառատոնի աշխատանքները	օր	4	25000	100000		100000
2.5	Գովազդ սոցիալական հարթակներում /SMM/ 2 հարթակ,2 ամիս	ամիս	2	110000	220000		220000
2.6	Դիպլոմների և մասնակցության հավաստագրերի պատրաստում	հատ	50	610	30500		30500
2.7	Պրոմո հոլովակի պատրաստում	վայրկ.	17	4676	79500		79500
2.8	Տպագրական նյութեր /հրավիրատոմս, ազդագիր,ծրագիր,բեյջ/	հատ	1	1		750000 / Դավ տպագրատուն/	750000
Ընդամենը Բ							**3.000.000**
Գ	**Գործուղում**						
3.1	ՀՀ Գեղարքունիքի մարզ Կեցություն /50 անձ,4 օր/	մարդ	200	5000		1000000 /Մակ-ի Հայաստանյան գրասենյակ/	1000000

3.2	ՀՀ Գեղարքունիքի մարզ Սնունդ /50 անձ,4 օր/	մարդ	200	3000		600000 /Մակ-ի Հայաստանյան գրասենյակ/	600000
3.3	Մեքենա՝ Երևան-Գեղարքունիքի մարզ-Երևան/ավտոբուս 50անձի համար/	մեքենա	2	65000		130000 /Էկոտրանս ընկերություն/	130000
Ընդամենը Գ						**1 730 000**	
ԸՆԴԱՄԵՆԸ					**2.250.000**		
Ընդամենը ԱԱՀ					**450.000**		
Ընդամենը					**2.700.000**	**5 180 000,որից 2.480.000 համաֆինանսավորում**	

Դրամաշնորհառու «Արմ Ֆիլմ Ինդուստրի Դևելոպմենտ» մշակութային հիմնադրամ
Ծրագրի անուն Կարճամետրաժ ֆիլմերի 4-րդ միջազգային կինոփառատոն
Ծրագրի տևողություն 2 ամիս

ՀՀ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**		
1.1	Փառատոնի ղեկավար	130000	Համակարգում է ազգային մրցութային ծրագրի ամբողջ ընթացքը:
1.2	Փառատոնի համակարգող/միջազգային ծրագիր/	130000	Համակարգում է միջազգային մրցութային ծրագրի ամբողջ ընթացքը:
260000	**Ընդամենը Ա**		
Բ	**Ծրագրային ծախսեր**		
2.1	Փառատոնի հոլովակի պատրաստում/ազգային ծրագիր/	280000	Մրցութային ծրագրում ընդգրկված ֆիլմերի մոնտաժ:
2.2	Փառատոնի հոլովակի պատրաստում/միջազգային ծրագիր/	280000	Մրցութային ծրագրում ընդգրկված ֆիլմերի մոնտաժ:
2.3	Կարճամետրաժ ֆիլմի DSP ֆորմատի ստեղծում	1000000	Մրցութային ծրագրում ընդգրկված ֆիլմերի ֆորմատի տեղափոխում թվային կրիչի վրա՝ցուցադրությունները ապահովելու համար:
2.4	4 օր ֆոտո և վիդեո նկարահանում փառատոնի աշխատանքները	100000	Փառատոնի անցկացման օրերի մասին ֆոտո և վիդեո նկարահանում:

2.5	Գովազդ սոցիալական հարթակներում /SMM/ 2 հարթակ,2 ամիս	220000	Իրականացվվելու է հետևողական աշխատանքներ ուղղված Ծրագրի հանրահռչակմանը, տարածմանը համացանցի, մամուլի միջոցով, SMM (Social Media Managment) սոցիալական կայքերի պաշտոնական էջերի վարում (Facebook, Instagram):
2.6	Դիպլոմների և մասնակցության հավաստագրերի պատրաստում	30500	Հաղթող մասնակիցների և մասնակցած հեղինակների դիպլոմների տպագրում:
2.7	Պրոմո հոլովակի պատրաստում	79500	Փառատոնի լոգոյի ինտրո հոլովակի պատրաստում:
2.8	Տպագրական նյութեր /հրավիրատոմս, ազդագիր,ծրագիր,բեյջ/	750000	Փառատոնի անցկացման համար անհրաժեշտ տպագրական նյութերի ապահովում:
Ընդամենը Բ			
3.000.000			
Գ	**Գործուղում**		
3.1	ՀՀ Գեղարքունիքի մարզ Կեցություն /50 անձ,4 օր/	1000000	Մասնակիցների կեցության ապահովում:
3.2	ՀՀ Գեղարքունիքի մարզ Սնունդ /50 անձ,4 օր/	600000	Մասնակիցների սննդի ապահովում:

3.3	Մեքենա՝ Երևան-Գեղարքունիքի մարզ-Երևան/ավտոբուս 50անձի համար/	130000	Մասնակիցների տեղափոխման ապահովում:
Ընդամենը Գ 1.730.000			
Ընդամենը ԱԱՀ		**450.000**	
Ընդամենը		**5 180 000,որից 2.480.000 համաֆինանսավորում**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Արմֆիլմ Ինդուստրի Դեվելոպմենտ մշակութային հիմնադրամ»
ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 5
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20528221973 1001, ՀՎՀՀ 02693936
Հեռ. (055) 189-475
afidfoundation@gmail.com
Կատարողի ստորագրությունը
հիմնադրամի տնօրենի ժ/պ՝
Հմայակ Ալեքսանյան
Կ. Տ.